ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

Ի պատասխան Ձեր 31.10.2023թ. հ.013 գրության՝ տեղեկացվում է, որ Կենտրոն վարչական շրջանի, Վարդանանց փողոց հ.24 շենք, հ.3 հասցեում դեռևս 22.06.2023թ. կատարված տեղատեսության արդյուքում պարզվել է, որ նշված հասցեում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի իրականացվել է պատուհանի բացվածքների ֆիզիկական չափերի մեծացման և շենքի արտաքին պատին մետաղական աստիճանավանդակի ամրացման շինարարական աշխատանքներ, որի կապակցությամբ 22.06.2023թ. Արմեն Աբրահամյանի նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ հ.003276 արձանագրությունը:

Միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ դիմումում մատնանշված շենքի ճակատային հատվածում փոփոխությունները ծանրաբեռնում է հիշյալ հասցեի բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման համար առանձնացված շենքի համասեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականությունը հանդիսացող հողամասը, ուստի՝ համաձայն «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի՝ բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են շենքը կրող կառուցվածքները, շենքի միջհարկային ծածկերը (առաստաղները, հատակները), նկուղները,..., իսկ նույն օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բարձրագույն մարմինը շինությունների սեփականատերերի ժողովն է:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ՀՀ Կառավարության 2007թ. հ.1161-Ն որոշման 12-րդ կետի համաձայն՝ ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող պարտադիր նորմերի պահպանումը, որը հանդիսանում է բազմաբնակարան բնակելի շենքի կառավարման մարմնի գործառույթը, ներառում է ինքնակամ շինարարության կանխարգելում, դրանց հետևանքների վերացման (քանդման) ապահովում, ընդհանուր օգտագործման տարածքների ապօրինի (ինքնակամ) զավթման կանխարգելում, դրանց հետևանքների վերացման ապահովում:

Տեղեկացվում է նաև, որ գույքային հարկերի հաշվառման համակարգերում առկա տվյալներով, ք. Երևան, Վարդանանց փողոց, 24 շենք 39-40 հասցեներում քաղաքացի Հրաչյա Մարատի Գրիգորյանի անվամբ որևէ գույքային միավոր հաշվառված չէ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ